12.12.25 - 12.12.25
13:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 320 լսարան



Ս.թ. դեկտեմբերի 12-ին՝ ժամը 13:30-ին, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում «Համայնքահենք ժառանգության կայուն պահպանություն և զբոսաշրջության զարգացում» թեմայով դասախոսություն կկարդա Հոկայդոյի համալսարանի զբոսաշրջության կիրառական ուսումնասիրությունների կենտրոնի պրոֆեսոր Նորիակի Նիշիյաման։

Դասախոսությունը տեղի կունենա Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և ԵՊՀ-ի միջև գործակցության շրջանակում՝ նպատակ ունենալով հայ հանրությանը ներկայացնելու ճապոնական մոդեռնիզացիայի ուղին, ինչպես նաև Ճապոնիայի մշակույթը, պատմությունը, տնտեսությունն ու քաղաքականությունը։

Դասախոսությունը կհետաքրքրի զբոսաշրջության, ճարտարապետության կամ քաղաքաշինության ոլորտներն ուսումնասիրող ուսանողներին և հետազոտողներին։

Բանախոսի կենսագրական տվյալներին հնարավոր է ծանոթանալ այստեղ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am